



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17368

Quarterly

University of Pennsylvania

Zephyr

G. M. P.

1908

37

U-67

*Արամ Լեւոնի Վարդապետյան  
Կամ. Իսպոլայ Երանյ. Եսթրոմի անդրաշին. Գրադարան*

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

( Ա.գգ. Կեդր. Վարչութեան Վաւերացուած Օրինակը  
Եւ Նոր Ծրագիրը  
Միասին Տպեալ ):



2010

37  
5-67

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
Վ. ԵՒ Հ. ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ  
Կ. ՊՈԼԻՍ - ՍԻՐՔԵՃԻ  
1908

37

Մ-67

Կ.Մ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՆԱՅՈՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



( Ազգ. Կեդր. վարչությունն և վաճառատան Թիֆլիզ  
և Նոր Ծրագիրը  
Միասին Տպեալ ):



2001

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Վ. Ե. Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

և ՊՈԼԻՍ - ՍԻՐԲԷՃԻ



Ա.Ջ.Գ. ԿԵԳ.Ր. Վ.Ա.Բ.ԶՈՒԹՅՆԷՆ Վ.Ա.Ե.Բ.Ա.ՅՈՒԱՅ  
ՕՐԻՆՍԱԿԸ

Ն Պ Ա Տ Ա Կ

- Յօդ. 1. Ընկերութեան նպատակն է Թուրքիոյ հայարնակ գաւառաց մէջ նախնական կրթութիւն տարածել:
- Յօդ. 2. Ընկերութիւնը Ազգ. Պատրիարքարանի վերաբերեալ գործերու չմիջամտեր, ազգային ու քաղաքական և ո՛չ մի կուսակցութեան չվերաբերիր, և իր կրթական գործունէութիւնէ դուրս ո՛ր և է խնդրով չզբաղիր:
- Յօդ. 3. Ընկերութեան կեդրոնատեղին է Կ. Պոլիս: Ընկերութեան տարեգլուխն է Սեպտեմբեր 1 Վ:
- Յօդ. 4. Ընկերութիւնը իր կրթական գործունէութիւնը կը կատարէ հետեւեալ կերպով և ըստ պահանջմանց հարկին.
  - Ա. Նախակրթարաններ բանալ և վարել:
  - Բ. Գասախօսներ զրկել պարբերաբար:
  - Գ. Ուրիշներու կողմանէ հաստատեալ նախակրթարաններու օգնել և նպաստել:
  - Դ. Մեծերու համար գիշերային դասախօսութիւններ, հրապարակախօսութիւններ և լսարաններ հաստատել:
  - Ե. Գասագրքեր հրատարակել:
  - Զ. Կրթութեան վերաբերեալ ծրագրեր պատրաստել և պարբերական հրատարակութիւններ ընել:
  - Է. Գարոցական պիտոցից խանութներ բանալ:
- Յօդ. 5. Ընկերութիւնը կրնայ բարերարներու հաշուոյն վարժարաններ բանալ և անոնց կամքին համաձայն վարել, պայմանաւ որ ներկայ կանոնագրին տրամադրութեանց հակառակ չըլլայ:
- Յօդ. 6. Ընկերութիւնը Օսմանեան և Ազգային Սահմանադրութեան համաձայն որոշ ուղղութիւն մը կուտայ իր կրթական ծրագրին:



2647  
39

Ն.ՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Ն Պ Ա Տ Ա Կ

- Յօդ. 1. Ընկերութեան նպատակն է Թուրքիոյ հայաբնակ գաւառաց մէջ կրթութիւն տարածել:
- Յօդ. 2. Ընկերութիւնը ազգային իշխանութեանց վերաբերեալ գործերու չմիջամտեր, ազգային կամ քաղաքական ոչ մի կուսակցութեան կը վերաբերի և իր նպատակէն դուրս ո՛ր և է խնդրով չի զբաղիր:
- Յօդ. 3. Ընկերութեան կեդրոնատեղին է Կ. Պոլիս և սարեգլուխն է Սեպտեմբեր 1 ը:
- Յօդ. 4. Ընկերութիւնը իր նպատակը կը գործադրէ հետեւեալ կերպով, իր միջոցներուն ներածին չափ.
  - Ա. Կրթական, գիւղասնտեսական և արհեստական ծագիրներ պատրաստելով:
  - Բ. Նախակրթարաններ բանալով և վարելով:
  - Գ. Վարժապետնոցներ և վարժուհինոցներ բանալով:
  - Դ. Գիւղասնտեսական և արհեստագիտական դասընթացներ ու վարժարաններ բանալով:
  - Ե. Ուսուցիչներ և ուսուցչուհիներ զրկելով:
  - Զ. Ուրիշներու կողմէ հաստատուած նախակրթարաններուն օգնելով գրեական օժանդակութեամբ:
  - Է. Ժողովուրդին համար գիշերային դասեր, հրապարակային դասախօսութիւններ և ընթերցարաններ հաստատելով:
  - Ը. Գասագրքեր սպելով և գիւղասնտեսական, մանկավարժական, առողջապահական ու արհեստագիտական պարբերական հրատարակութիւններ բնելով:
  - Թ. Գարոցական գրավաճառանոցներ բանալով:
- Յօդ. 5. Ընկերութիւնը կրնայ բարերարներու անունով և հաշուոյն հաստատութիւններ բանալ, որոնք ենթակայ պիտի ըլլան Ընկերութեան ներքին կանոնագրի ու ծրագրի տրամադրութեանց:
- Յօդ. 6. Ընկերութիւնը Օսմ. ու Ազգ. Սահմանադրութեանց համաձայն ուղղութիւն մը կուտայ իր ծրագրին:
- Յօդ. 7. Ընկերութիւնը իր կրթական և ներքին գործունէութեանց մէջ բոլորովին անկախ է ո՛ր և է ազգային կամ ուրիշ մարմնէ մը և երկրին օրինական տրամադրութիւններէն դուրս ամեն միջամտութիւն կը մերժէ:

Կ Ա Ջ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

- Յօդ. 7. Ընկերութիւնը կը կազմուի բաժանորդ անդամներէ և կ'ունենայ Ա. Հիմնադիր ժողով մը, Բ. Տնօրէն Խորհուրդ մը և Գ. Մասնաճիւղեր:
- Յօդ. 8. Ամէն հայ, որ ազգային կամ քաղաքային դատաւարատիւն չկրի, կրնայ բաժանորդ անդամ ըլլալ ընդունելով ներկայ կանոնադրին արամադրութիւնները և վճարելով առնուազն ամսական մէկ դրուշ:

Ամէն բաժանորդ անդամ, որ վեց ամիս չէ վճարած իր ամսական բաժանորդագրութիւնը, կը դադարի բաժանորդ անդամ ըլլալէ, և սակայն յետանկայ վճարումները ընկելով կրնայ վերստին անդամակցիլ՝ առանց վաճելու, դադարի միջոցին, անդամակցութեան իրաւունքները:

- Յօդ. 9. Բաժանորդ անդամոց իրաւունքներն են.
  - Ա. Եթէ Պոլիս կը բնակին՝ ընտրող ըլլալ Հիմնադիր ժողովոյ անդամոց, առնուազն 20 տարեկան ըլլալու պայմանաւ:
  - Բ. Եթէ Պոլսէն դուրս կը բնակին՝ ընտրող ըլլալ Մասնաճիւղերու, Գործադիր ժողովոյ և Պոլսոյ Հիմնադիր ժողովոյ անդամոց:
  - Գ. Եթէ քսան և չինգ տարին լրացուցած են և ամսական առնուազն 5 դրուշ կը վճարեն՝ ընտրելի ըլլալ Պոլիս Հիմնադիր ժողովոյ անդամակցութեան:
  - Դ. Հաշիւ և գործունէութեան տեղեկագիր պահանջել և գրաւոր կարծիք յայտնել:
- Յօդ. 10. ՊԱՏՈՒՅՑ ԱՆԴԱՄ պիտի հռչակուի Ընկերութեան բարոյական մեծ ծառայութիւն մը մատուցանող կամ առնուազն յիսուն ոսկուոյ նոյն իրատուութիւն մ'ընող անձը. իսկ ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄ պիտի հռչակուի այն անձը, որ բարոյական նշանակելի աջակցութիւն մը կամ առնուազն չինգ հարիւր ոսկուոյ գումար մը կը նուիրէ:

Կ Ա Ջ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

- Յօդ. 8. Ընկերութիւնը կը կազմուի բաժանորդ անդամներէ, որոնք երկուքի կը բաժնուին Ա. Գործօն անդամ, Բ. Օժանդակ անդամ, և կ'ունենայ Հիմնադիր ժողով մը և Մասնաճիւղեր:
- Յօդ. 9. Ամէն հայ, որ ազգային կամ քաղաքային դատաւարատիւն մը չի կրեր, կրնայ Գործօն անդամ ըլլալ Ընկերութեան ընդունելով ներկայ կանոնադրի սրամադրութիւնները, վճարելով իբրեւ մուսխի սուբ մէկ օսմ. ոսկի և իբրեւ ամսավար 15 դանեկան արծաթ:

Գործօն անդամ կը համարուին նաեւ Հիմնադիր ժողովի ու Տնօրէն ժողովի բոլոր անդամները:

- Յօդ. 10. Ամէն անոնք որ ամսական 15 դրուշ նուազ բաժնեգին կը վճարեն՝ կը կոչուին Օժանդակ անդամ:
- Յօդ. 11. Ամէն Գործօն անդամ որ վեց ամիս չէ վճարած իր ամսական բաժինը, կը դադարի անդամակցութենէ:
- Յօդ. 12. Գործօն անդամներու իրաւունքներն են.
  - Ա. Հիմնադրաց ժողովի ընտրութեան փոխարկութեան մասնակցիլ, պայմանաւ որ սարի մը անդամակցած ըլլալ Ընկերութեան և վճարած սարեկան բաժնեգինը:
  - Բ. Ընտրելի ըլլալ Հիմն. ժողովի անդամակցութեան պայմանաւ որ մայրաքաղաքս բնակի:
  - Գ. Եթէ մայրաքաղաքէն դուրս կը բնակի՝ ընտրելի ըլլալ նոյն տեղի Մասնաճիւղերու անդամակցութեան:
  - Դ. Պահանջել և ստանալ սարեկան տեղեկագիրն ու հաշիւը և գրաւոր կարծիք յայտնել:
- Յօդ. 13. Պատուոյ անդամ պիտի հռչակուի ընկերութեան բարոյական մեծ ծառայութիւն մը մատուցանող կամ առնուազն 100 ոսկուոյ միանուազ նուիրատուութիւն մ'ընող անձը: Իսկ Բարեբար անդամ պիտի հռչակուի այն անձը որ բարոյական նշանակելի աջակցութիւն մը կամ առնուազն 1000 ոսկուոյ գումար մը կը նուիրէ միանուազ:
- Յօդ. 14. Ուսուցչակէ պատուոյ տիտղոսը կը տրուի այն կրթական գործիչներուն՝ որոնք մեծ և նշանակելի ծառայութիւն մը կը մատուցանեն Ընկերութեան իրենց գրական և մանկավարժական օժանդակութեամբ:
- Յօդ. 15. Ուսուցչակէ պատուոյ տիտղոսը կը տրուի Միացեալ Ընկերութեան կրթական գործունէութեան մէջ ծառայող այն տեսչներուն և վարժապետանոցներու այն ուսուցիչներուն որոնք իրենց սարիներու օգտակար և արգիւնատես ծառայութեամբ և հեղինակութիւններով կ'արժանանան Ընկերութեան գնահատման:

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Բ Ժ Ո Ղ Ո Վ

- Յօդ. 11. Հիմնադիր ժողովը կը բաղկանայ Մասնաճիւղերէն ընտրուած 40 ներկայացուցիչ անդամներէ :  
Իւրաքանչիւր Մասնաճիւղի բաժանորդները՝ երբ իրենց թիւը 50ի հասնի՝ մէկ ներկայացուցիչ, և երբ 200ի հասնի՝ երկու ներկայացուցիչ ընտրելու իրաւունք ունին, սակայն այս 200ի թիւէն վերջ, Մասնաճիւղերը յաւելեալ իւրաքանչիւր 200 բաժանորդի համար միայն մէկ ներկայացուցիչ ընտրելու իրաւունք կ'ունենան չարունակաբար :
- Յօդ. 12. Հիմնադիր ժողովը Ընկերութեան օրէնսդիր և համարառու մարմինն է :
- Յօդ. 13. Հիմնադիր ժողովը կը բաղկանայ 11 րդ. Յօդուածի արամադրութեան համեմատ մասնաճիւղերու կողմանէ ընտրուած ներկայացուցիչ անդամներէ, որոնք Պոլիս բնակող և ընտրելի լինելու հանգամանքն ունեցող բաժանորդաց մէջէն կ'անտնտնեն, և հետեւապէս ամէն առնչման միջոցով որոշ թիւը չկրնար ունենալ : Հիմնադիր ժողովոյ մեծամասնութեանը համար միշտ ընտրուած անդամներուն կէսէն մէկ աւելի թիւի ներկայութիւնը կը փոխառուի, որպէս զի Հիմնադիր ժողովը օրինաւոր նիստ կարենայ գումարել :
- Յօդ. 14. Ամէն անբաւական նիստէ շարաթ մը վերջ նոր նիստ կը գումարուի, և այս նիստը օրինաւոր կը նկատուի՝ Հիմնադրաց ժողովոյ անդամոց երկու երրորդ մասին կէսէն մէկ աւելին ներկայութեամբ, այս պարագան Մայր Դիւանի կողմէ նախապէս ազդարարուելով բոլոր անդամներուն :
- Յօդ. 15. Հիմնադիր ժողովոյ անդամոց մէկ երրորդը երկու տարին մի անգամ վիճակաւ կը դադարի և դադարեալ անդամք վերընտրելի են : Դիւանը ասոնց ցանկը կը հաղորդէ Տնօրէն ժողովին, որ պարտաւոր է անմիջապէս ծանուցանել իւրաքանչիւրին պատկանեալ Մասնաճիւղին, որպէս զի նոր ընտրութիւն կատարուի՝ եթէ հարկ է : Տնօրէն ժողովոյ կողմանէ ամբողջ Պոլսոյ ընտրելի բաժանորդ անդամոց ցանկը պիտի հաղորդուի Մասնաճիւղերուն ամէն տարեգլուխ :
- Յօդ. 16. Հիմնադիր ժողովը կը գումարուի Պոլիս ամէն տարի յունիս ամսոյ առաջին կիրակէն, հրաւիրանօք Մայր Դիւանին, և կը շարունակէ իր նիստերը մինչև օրակարգին սպառումը :
- Յօդ. 17. Հիմնադիր ժողովն արտաքոյ կարգի նիստ ալ կ'ընէ կա՛մ Մայր Դիւանի որոշմամբ, կա՛մ Տնօրէն ժողովոյ և կամ զոնէ 12 ներկայացուցիչ անդամոց առաջարկութեամբ :

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Բ Ժ Ո Ղ Ո Վ

- Յօդ. 16. Հիմն. ժողովը Ընկերութեան օրէնսդիր եւ համարառու մարմինն է եւ կը բաղկանայ 48 անդամներէ :
- Յօդ. 17. Հիմն. ժողովի օրջանը 10 սարի է եւ երկու սարին անգամ մը 1/5ը վիճակով կը դադրի : Դադարեալ անդամները վերընտրելի են :
- Յօդ. 18. Հիմն. ժողովի դադարեալներուն յաջորդներ կ'ընտրուին փոքրից մեծամասնութեամբ Կ. Պոլիս գտնուող Գործոն անդամներու գաղտնի փոխարկութեամբ : Փոխարկութեան օրէն սասնրինց օր առաջ կը յայտարարուի բոլոր Գործոն անդամներուն եռապատիկ ցանկը դրկուելով :
- Յօդ. 19. Հիմն. ժողով կը գումարուի ամէն սարի յունիսի վերջին շաբթուն վաւերացնելու համար պիւստեն : Իսկ դիկտեմբերի առաջին շաբթուն կը վաւերացնէ ընկերութեան հաշիւները :
- Յօդ. 20. Հիմն. ժողովը արեակարգ նիստ ալ կ'ընէ Մայր Դիւանի կամ Տճօրէն ժողովի որոշումով եւ կամ զէք 10 անդամներու գրաւոր առաջարկով :
- Յօդ. 21. Որպէսզի Հիմնադիր ժողովին նիստը օրինաւոր ըլլայ, անդամներուն կեսն մէկ աւելին ներկայութիւնը անհրաժեշտ է :
- Յօդ. 22. Ամէն անբաւական նիստ շաբաթ մը յետոյ նոր նիստ կը գումարուի եւ այս նիստը օրինաւոր կը նկատուի անդամներուն 2/3ին կեսն մէկ աւելին ներկայութեամբ՝ այս պարագան Մայր Դիւանի կողմէ ազդարարուելով նախապէս բոլոր անդամներուն :
- Յօդ. 23. Օրուան Պատիւաբար կը հրաւիրուի նախագահել Հիմն. ժողովի նիստերուն :
- Յօդ. 24. Հիմն. ժողովը կը հրաժարեցնէ իր այն անդամը որ Ընկերութեան օրէններուն ու շահերուն հակառակ կը գործէ կամ դատապարտութիւն կը կրէ ազգային կամ քաղաքային յանձանքի մը համար :
- Յօդ. 25. Հրաժարեալ կը համարուին այն անդամները որոնք մէկ սարի կը բացակային Պոլիսէն :
- Յօդ. 26. Հիմն. ժողովը կ'ընտրէ իր Մայր Դիւանը՝ որ կը բաղկանայ Ասենապետ, Ասենապար, Գերասենապետ եւ Գերասենապարէ մը : Մայր-Դիւանի պատշտամարտութիւնը երկամեայ է : Անդամները վերընտրելի են :
- Յօդ. 27. Հիմն. ժողովը կ'ընտրէ նաեւ երեքական անդամներէ բաղկացած Կրթական դիւան մը եւ Ելակական դիւան մը : Այս դիւանները կ'ընտրեն իրենց Ասենապետը եւ կը ծանուցանեն Մայր-Դիւանին. կը բնեն Հիմն. ժողովին կողմէ իրենց յանձնուած խնդիրները եւ կը տեղեկագրեն անոր :

Յօդ. 18. Ներկայ կանոնագրիս գործադրութեամբ առաջին անգամ ընտրելի Հիմնադիր ժողովոյ անդամոց առաջին անգամ դադարելի 1/3ը և երկրորդ անգամ դադարելի 1/3ը վիճակու կը դադարին, անկէ վերջ ընտրութեան կարգով:

Յօդ. 19. Հիմնադիր ժողովը կը հրատարեցնէ իր այն ներկայացուցիչ անդամները, որք ընկերութեան շահուց և օրինաց հակառակ գործելու զրից մէջ կը գտնուին և կամ դատաւարութիւն մը կը կրեն ազգային ու քաղաքային յանցանաց համար: Հիմնադիր ժողովը հրատարեալ կը համարի իր այն ներկայացուցիչ անդամները, որք մնալուն կերպիւ, այսինքն գէթ մէկ տարւոյ համար կը բացակային Պոլսէն:

Յօդ. 20. Օրուան Պատրիարքը կը նախագահէ Հիմնադիր ժողովոյ նիստերուն:

Յօդ. 21. Հիմնադիր ժողովը կ'ընտրէ իւր Մայր Դիւանն՝ բաղկացեալ մի Ատենապետէ և մի Դեր-Ատենապետէ, մի Ատենադպիրէ և մի Դեր-Ատենադպիրէ, Մայր Դիւանի անդամակցութիւնը երկու տարւոյ համար է: Անդամները վերընտրելի են:

Յօդ. 22. Հիմնադիր ժողովը կ'ընտրէ նաև երկու Յանձնաժողովներ, իւրաքանչիւրն երեք անդամէ բաղկացեալ. Ա. Կրթական և Բ. Ելեւմտական: Սոյն Յանձնաժողովներն կ'ընտրեն իրենց Ատենապետն և կը ծանուցանեն անմիջապէս Մայր-Դիւանին, կը քննեն Հիմնադիր ժողովոյ կողմանէ իրենց յանձնուած խնդիրներն և կը տեղեկագրեն անոր:

Յօդ. 23. Հիմնադիր ժողովոյ, Մայր-Դիւանի և Յանձնաժողովներու անդամք չեն կրնար Տնօրէն ժողովոյ անդամակցիլ:

Յօդ. 24. Հիմնադիր ժողովը կը զբաղի ընկերութեան վերաբերեալ բոլոր խնդիրներով և գլխաւորաբար՝  
Ա. Կ'ընտրէ Տնօրէն ժողովը.  
Բ. Կը քուէարկէ տարեկան պիւտճէն.  
Գ. Կը վաւերացնէ տարեկան հաշիւները.  
Դ. Կը քննէ և կը վաւերացնէ տարեկան կրթական տեղեկագրերը:  
Ե. Կը վաւերացնէ կրթական ծրագիրը, որպէս և Մասնաճիւղերուն և պաշտօնէից կանոնագրերը.  
Զ. Կ'արտօնէ նոր վարժարաններուն բացումը և այլոց ալ փակումը, եթէ հարկ տեսնէ:

Յօդ. 28. Մայր-Դիւանի եւ Կրթական ու Ելմական Դիւաններու անդամներ չեն կարող անդամակցիլ Տնօրէն ժողովին:

Յօդ. 29. Հիմն. ժողովը կը զբաղի Ընկերութեան վերաբերեալ բոլոր խնդիրներով եւ գլխաւորաբար

- Ա. Կ'ընտրէ Տնօրէն ժողովը.
- Ա. Կը քուէարկէ տարեկան ելմացայցը.
- Գ. Կը վաւերացնէ տարեկան հաշիւները.
- Դ. Կը քննէ եւ կը վաւերացնէ տարեկան տեղեկագրերը.
- Ե. Կը վաւերացնէ կրթական ծրագիրները.
- Զ. Տնօրէն ժողովին առաջարկներն ու բացատրութիւնները լսելէ յետոյ կ'արտօնէ նոր վարժարաններու բացումը եւ ճիւղերուն ալ փակումը՝ եթէ հարկ տեսնէ:



Տ Ն Օ Ր Է Ն Ժ Ո Ղ Ո Վ

- Յօդ. 25. Ընկերութեան նպատակին գործադրութիւնն և անոր գործոց վարչութիւնը կը յանձնուի Տնօրէն Ժողովոյ մը, բաղկացեալ եօթն անդամներէ, որոնք ուզակի ու քուէից բացարձակ առաւելութեամբ ներկայացուցչաց ժողովէն կ'ընտրուին, բոլոր Ընտրելի Անդամոց մէջէն, համաձայն Ծրդ. Յօդուածին:
- Յօդ. 26. Տնօրէն Ժողովն ինքն ընտրելով իր Դիւանը, Համարակալն ու Գանձապետը, և կատարելով այլ կարգի վարչական ճիւղերու բաժանումը իր անդամոց մէջ, կը տեղեկագրէ Մայր-Դիւանին, որ իր կարգին կը հաղորդէ զայն Կեդր. Վարչութեան և հրատարակութեան կուսայ:
- Յօդ. 27. Տնօրէն Ժողովոյ մէն մի անդամ պատասխանատու է թէ՛ Տնօրէն Ժողովին և թէ՛ Հիմնադիր Ժողովին. Տնօրէն Ժողովն հաւաքաբար այլ պատասխանատու է Հիմնադիր Ժողովին:
- Յօդ. 28. Տնօրէն Ժողովը արտօնուած է Կրթական ու Ելմտական գործոց և կամ Ընկերութեան վերաբերեալ ուրիշ ու է ինդրոյ մասին իր պատասխանատուութեան տակ Յանձնաժողովներ ընտրել, որոնք պարտաւոր են իրենց համարատուութիւնը ներկայացնել Տնօրէն Ժողովին:
- Յօդ. 29. Տնօրէն Ժողովը կը պատրաստէ տարեկան պիւտձէն յունիս ամսոյ մէջ և կը գործադրէ Հիմնադիր Ժողովոյ վաւերացումէն յետոյ: Նոյնպէս Տնօրէն Ժողովը կը պատրաստէ և կամ իր պատասխանատուութեան ներքե պատրաստել կուսայ կրթական յայտագրերուն ընդհանուր սկզբունքները, զորս Հիմնադիր Ժողովոյ վաւերացման ենթարկելէ յետոյ կը գործադրէ:
- Յօդ. 30. Տնօրէն Ժողովը իր այլ և այլ գործողութեանց համար պարտի ունենալ պաշտօնական տոմարներ, որոնք գործածուելէ առաջ թուահամարով և թուականաւ վաւերացեալ պիտի լինին Մայր-Դիւանին կնքովը եւ և ստորագրութիւններովը:
- Յօդ. 31. Եթէ Տնօրէն Ժողովը կալուած կամ արժեթուղթ գնել կամ վաճառել ուզէ, պարտաւոր է պաշտօնական եւ պատճառարանեալ գրով մը Հիմնադիր Ժողովին դիմել՝ որն որ իր Ելմտական Դիւանին և կամ մասնաւոր Յանձնաժողովի մը քննութեան ենթարկելէ յետոյ կ'ընդունի կամ կը մերժէ և կամ կը բարեփոխէ:
- Յօդ. 32. Տնօրէն Ժողովոյ պաշտօնավարութիւնը երեք տարուոյ համար է: Եթէ Տնօրէն Ժողովոյ անդամոց մին կամ մէկ քանին հրաժարին, անոնց տեղ նոր ընտրութիւն կը կատարուի:
- Յօդ. 33. Տնօրէն Ժողովն իր պաշտօնավարութեան համարատու-

Տ Ն Օ Ր Է Ն Ժ Ո Ղ Ո Վ

- Յօդ. 30. Ընկերութեան նպատակին գործադրութիւնն ու գործերուն վարչութիւնը կը յանձնուին եօթն անդամներէ բաղկացած Տնօրէն Ժողովի մը գոր Հիմն. Ժողովը կ'ընտրէ իր անդամներուն մէջէն կամ դուրսէն:
- Յօդ. 31. Տնօրէն Ժողովի պաշտօնավարութիւնը ճիւղ սարի է: Անդամները վերընտրելի են:
- Յօդ. 32. Տնօրէն Ժողովը ընտրելով իր Դիւանը՝ Ասեմապետ, Ասեմագլխ, Ուսումնասիւցետ, Գանձապետ եւ Համարակալ, կը տեղեկագրէ Մայր-Դիւանին որ հրատարակութեան կուսայ եւ կը հաղորդէ Ազգ. Վարչութեան ի գիտութիւն:
- Յօդ. 33. Տնօրէն Ժողովի մէն մի անդամ պատասխանատու է թէ՛ Տնօրէն Ժողովին եւ թէ՛ Հիմն. Ժողովին: Տնօրէն Ժողովը հաւաքաբար այլ պատասխանատու է Հիմն. Ժողովին:
- Յօդ. 34. Տնօրէն Ժողովը արտօնուած է Կրթական ու Ելմտական գործերու կամ Ընկերութեան վերաբերող ու է և ինդրի մը համար իր պատասխանատուութեան տակ մասնախումբեր ընտրել, որոնք պարտաւոր են իրենց համարատուութիւնը ներկայել Տնօրէն Ժողովին:
- Յօդ. 35. Տնօրէն Ժողովը կը պատրաստէ տարեկան Ելմտացոյցը յունիսի մէջ եւ կը գործադրէ զայն Հիմն. Ժողովին վաւերացումէն յետոյ: Նոյնպէս ինք կը պատրաստէ կրթական ծրագրերը գորս Հիմն. Ժողովի վաւերացման ենթարկելէ յետոյ կը գործադրէ:
- Յօդ. 36. Տնօրէն Ժողովը իր այլեւայլ գործառնութիւններուն համար պարտի ունենալ պաշտօնական տոմարներ՝ որոնք գործածուելէ առաջ թուահամարով ու թուականով վաւերացուած պիտի ըլլան Մայր-Դիւանի կնքով ու ստորագրութիւններով:
- Յօդ. 37. Եթէ Տնօրէն Ժողովը կալուած կամ արժեթուղթ գնել եւ կամ ծախել ուզէ, պարտաւոր է պատճառաբանեալ տեղեկագրով մը դիմել Հիմն. Ժողովին՝ որ, իր Ելմտական Դիւանին կամ յատուկ մասնախումբի մը քննութեան ենթարկելէ յետոյ զայն՝ կուսայ իր վճիռը:
- Յօդ. 38. Ընկերութեան ընդհ. հատոյթներուն 5% պահեստի կը դրուի ապահով դրամասան մը մէջ: Տնօրէն Ժողովի գանձապահը հոյն դրամասան կը յանձնէ իր ֆոլ հաւաքուած դրամը երբ 100 ոսկին անցնի:
- Յօդ. 39. Տնօրէն Ժողովը ապահով դրամասան մը մէջ կը պահէ մասնաւոր նուիրատուութիւններէ եւ կտակներէ գոյացած գումարները որպէս անձեռնմխելի դրամագրուիս: Տոկոս կամ կտրոնները (եթէ արժեթուղթի վերածուած են այդ գումարները) միայն կրնայ պարբերաբար գանձել եւ ընկերութեան կրթական գործին յաշկացնել:

Թիւնը մասնաւոր տեղեկագրով մը Հիմնադիր Ժողովին կու տայ ամէն տարեշրջանի վերջ :

Ա. յս Տեղեկագիրը պիտի պարունակէ .

Ա. Ընկերութեան ընդհանուր կէքն ու մուտքը մանրամասնօրէն .

Բ. Մասնաձիւղերն և զանաք կազմող բաժանորդ անդամոց անուանքը .

Գ. Բացուած վարժարաններն և անոնց իւրաքանչիւրին աշակերտաց և պաշտօնէից թիւն , ու սուցման առարկաներն ու վճարուած թոշակները .

Դ. Պահեստի դրամին քանակութիւնը .

Ե. Իւրաքանչիւր նուէրի կամ նպաստի ակտակն ու քանակութիւնը .

Զ. Կեդրոնական ծախքերն ու կահկարասիքը .

Է. Վիճակագրական տեղեկութիւնք .

Ը. Դասագրոց սպազրութեան և այլ գործողութեանց հաշիւը :

Յօդ. 34. Տնօրէն Ժողովը տարեկան հաշուոց համարառութիւնը պարտի լրագրաց միջոցաւ հրատարակել :

Յօդ. 35. Ամէն տարի Հաշուեքննիչ Յանձնաժողով մը կ'ընտրուի Հիմնադիր Ժողովէն , 5 անդամէ բաղկացեալ , որք Օգոստոսին վերջնայի տարւոյն հաշիւները կը քննեն և իրենց տեղեկագիրը կը պատրաստեն , որն որ 33րդ. Յօդուածով յիշուած Տեղեկագրոց մէջ կը տպագրուի : Երբ Հիմնադիր Ժողովը կը վաւերացնէ այս ամէնը , տեղեկագիրը կը սպուի և կը հրատարակուի :

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ե Ր

Յօդ. 36. Ընկերութիւնը պարտի ունենալ — ուր որ հայ կայ Թուրքիոց և կամ Արտասահմանի մէջ — առժամեայ Մասնաժողովներ 3 էն մինչև 5 անդամներէ բաղկացեալ , որոնք կ'ընտրուին Տնօրէն Ժողովէն :

Յօդ. 37. Պոլսոց մէջ ո՛ր և է թաղ և Պոլսէն դուրս ո՛ր և է քաղաք մէկէ աւելի Մասնաժողով չէ կարող ունենալ : Սոյն Մասնաժողովներն պարտին անմիջապէս ծանուցանել Տնօրէն Ժողովին իրենց Դիւանին ու Գանձապետին ընտրութիւնը :

Յօդ. 40. Երբ անդամներէն մին կամ միւսին հրաժարին , նոր ընտրութիւն կը կատարուի : Նոյնպէս նոր ընտրութիւն կը կատարուի այն անդամներուն տեղ՝ որոնք երեք ամիս կը բացակային նիստերէն առանց բանաւոր պատճառի :

Յօդ. 41. Տնօրէն Ժողովը ամէն տարեշրջանի վերջ իր պատճենավարութեան համարատուութիւնը կ'ընէ Հիմն. Ժողովին՝ յատուկ տեղեկագրով մը՝ որ պիտի պարունակէ .

Ա. Ընկերութեան ընդհ. ելեւմուտքը մանրամասնօրէն :

Բ. Մասնաձիւղերու ու անոնց անդամներուն անունները :

Գ. Բացուած դպրոցներն , անոնց պատճեններուն ու աշակերտներուն քիւր , ուսուցման առարկաներն ու վճարուած քուակները :

Դ. Պահեստի գումարին բանակութիւնը :

Ե. Իւրաքանչիւր նուէրի կամ նպաստի տեսակն ու քանակութիւնը :

Զ. Կեդրոնական ծախքերն ու կարասիները :

Է. Վիճակագրական տեղեկութիւններ :

Ը. Դասագիրքերու սպագրութեան եւ այլ գործառնութեանց հաշիւը :

Թ. Տեսչութեանց տեղեկագրերը , եւ ազգային ու օտար մարմիններու հետ փոխանակուած քրթակցութիւններէն յարմար դատուածները :

Յօդ. 42. Տնօրէն Ժողովը պարտի մամուլի միջոցաւ հրատարակել տարեկան հաշիւներուն ամփոփումը :

Յօդ. 43. Ժողովը ամէն տարի հինգ անգամէ բաղկացած հաւուսեմէնիչ յանձնախումբ մը կ'ընտրէ , որ դեկտեմբերին սկիզբը վերջացած տարւոյն հաշիւը կը ընէ եւ իր տեղեկագիրը կը պատրաստէ : Այս պատճենագիրը 41րդ. յօդուածով յիշատակուած տեղեկագրին կը կցուի : Երբ Հիմնադիր Ժողովը այս ամէնը վաւերացնէ , տեղեկագիրը կը սպուի ու կը հրատարակուի :

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ե Ր

Յօդ. 44. Ընկերութիւնը ամէն հայաբնակ տեղերու մէջ կուրենայ մասնաձիւղ մը , հինգէն մինչեւ եօթն անդամներէ բաղկացած՝ զորս Տնօրէն Ժողովը կ'ընտրէ տեղւոյն Գործօն անդամներուն մէջէն :

Յօդ. 45. Կ. Պոլիսի մէջ ո՛ր եւ է քաղ եւ Կ. Պոլիսէ դուրս ո՛ր եւ է քաղ մէկէ աւելի Մասնաձիւղ չի կրնար ունենալ :

Յօդ. 46. Իւրաքանչիւր մասնաձիւղ ընտրելով իր դիւանն ու գանձապետը , կը տեղեկագրէ Տնօրէն Ժողովին :

Յօդ. 38. Ամէն հայ, որ ազգային կամ քաղաքային դատապարտութիւն մը չի կրեր, կրնայ սոյն Ընկերութեան անդամակցութեան համար դիմել իր բնակած տեղւոյն Մասնաճիւղին:

Յօդ. 39. Մասնաժողովները պարտաւոր են բաժանորդաց թիւը շտապնելու ջանք ընել:

Յօդ. 40. Ու է հայաբնակ տեղւոյ մը մէջ բաժանորդաց թիւն երբ 50 ի հասնի՝ առժամեայ Մասնաժողովը օրինաւոր Մասնաժողովի կը վերածուի հետեւեալ կերպով:

Յօդ. 41. Պաշտօնի մէջ գտնուող Մասնաժողովը իր անդամոց թուոյն չափ՝ սոյնինքն Յէն մինչև 5 անդամներ նիստի հրաւիրելով, Ընտրողական Ժողով մը կը դուժարէ, և ևս ապաստիկ ընտրելեաց ցանկ մը պատրաստելով՝ ամէն բաժանորդաց քուէթուղթ կը բաժնէ ընտրելու համար Յէն 5 հոգիէ բաղկացեալ Մասնաճիւղը:

Յօդ. 42. Քուէարկի բաժանորդները անպատճառ սոյն ցանկին հետեւելու պարտաւոր չեն:

Յօդ. 43. Ընտրութիւնք քուէարկուաց բացարձակ առաւելութեամբ կը կատարուին, և եթէ համեմատականի մնան՝ համեմատականի մնացածներուն վրայ քուէից առաւելագոյն թիւը ստացողներն ընտրուած կը համարուին:

Յօդ. 44. Ընտրողական Ժողովը մասնաւոր պաշտօնագրով մը Տնօրէն Ժողովին կը հաղորդէ քուէարկութեան արդիւնքը և Տնօրէն Ժողովը ալ հաստատելով պաշտօնի կը հրաւիրէ Մասնաճիւղի անդամ ընտրած անձինքը:

Յօդ. 45. Մասնաճիւղերուն պաշտօնավարութեան տեղողութիւնը երեք տարի է և վերընտրելի են:

Յօդ. 46. Նորակազմ Մասնաճիւղն ինքն կ'ընտրէ իր Դիւանն ու Գանձապետը և պաշտօնական գրութեամբ մը՝ որ ամբողջ նորընտիր անդամոց ստորագրութիւնները պիտի կրէ՝ կը հաղորդէ Տնօրէն Ժողովին:

Յօդ. 47. Մասնաճիւղերուն պաշտօնը հետեւեալ կերպով կը սահմանաւորուի.

Ա. Բաժանորդաց թիւը շտապնել և վճարելի բաժիններու կանոնաւոր գանձման հսկել.

Բ. Գանձապետին հաշիւները քննել ամէն երեք ամիս և արդիւնքը ատենական արձանագրութեան մէջ նշանակել:

Գ. Ամէն երեք ամիս թէ՛ հաշիւներն և թէ՛ ինչ որ գանձուած է՝ Պոլիս ղրկել Տնօրէն Ժողովին.

Դ. Տեղական հանգամանքներն նկատի առնելով և միմիայն տեղական միջոցներով Ընկերութեան համար նպաստ հուսաքել և անոր արդիւնքը՝ առանց եռամսեայ հաշուետուութեան հետ կապակցելու՝ անմիջապէս ղրկել Պոլիս Տնօրէն Ժողովին, ընդհանուր նպաստահաւաքումներն միմիայն Տնօրէն Ժողովոյ որոշմամբ կրնան կատարուիլ.

Յօդ. 47. Մասնաճիւղերուն պաշտօնավարութիւնը եռամսայ է: Անդամները վերընտրելի են:

Յօդ. 48. Մասնաճիւղերուն պաշտօնն է:  
Ա. Բաժանորդներուն քիւր շացցնել և բաժնեգիններուն կանոնաւոր գանձումին վրայ հսկել:

Բ. Գանձապետին հաշիւները քննել ամէն երեք ամիս և արդիւնքը նշանակել ասենական արձանագրութեան մէջ:  
Գ. Ամէն երեք ամիս Տնօրէն Ժողովին ղրկել հաշիւներն ու գանձուած դրամը:

Դ. Տեղական միջոցներով նպաստ հաւաքել և արդիւնքը ղրկել Տնօրէն Ժողովին, առանց սպասելու եռամսեայ հաշուետուութեան: Ընդհանուր նպաստահաւաքումները Տնօրէն Ժողովի հաւանութեամբ միայն կրնան կատարուիլ:

Ե. Տնօրէն Ժողովի յանձնարարութեան վրայ, տեղական դպրոցի մը, կամ պաշտօնէութեան ընթացիկն և կամ ընդհանուր նպաստի վերաբերեալ որոշումները գործադրել:

Յօդ. 49. Մասնաճիւղերը Ընկերութեան դպրոցներուն վրայ ո՛ր և է իրաւասութիւն կամ միջառութեան իրաւունք չունին, ցորչափ Տնօրէն Ժողովը չարտօնէ գանձնք առ այդ:

Ե. Տնօրէն Ժողովոյ մասնաւոր և պաշտօնական յանձնարարութեան վրայ տեղական վարժարանի մը և կամ պաշտօնէութեան ընթացքին և կամ ընդհանրական նպատակ վերաբերեալ որոշումները գործադրել :

Զ. Մասնաճիւղերն իրենց գտնուած և կամ ունէ տեղւոյն վրայ Ընկերութեան հաստատած վարժարանաց վրայ ինքնուրոյն ո՛ր և է իրաւասութիւն և կամ միջամտութեան իրաւունք չունին՝ ցորչափ առ այդ չարտօնուին Տնօրէն Ժողովին մասնաւոր որոշումովը :

Է. Մասնաճիւղը իր թւոյն չափ բաժանորդներ անդամակից առնելով՝ 13 բոլ. Յօդուածի տրամադրութեան համաձայն Հիմնադիր Ժողովոյ մէկ անդամի և կամ մէկէ աւելի անդամներու քուէարկութեամբ ընտրութեան համար կը կազմէ Ընտրողական Ժողով, սոյն Ընտրողական Ժողովն ալ ընտրելի ներկայացուցիչ անդամաց մէկ եռապատիկ ցանկը կը պատրաստէ, ընտրողք ազատ լինելով սակայն սոյն ցանկէն դուրս ալ քուէարկելու, և ընտրութեան գործողութեան հսկելէ և զայն ամբողջացնելէ վերջը՝ ընտրողական տեղեկագիրը կը պատրաստէ և զայն ստորագրելով կը դրկէ Տնօրէն Ժողովին, որն որ պարտաւոր է յետ քննութեան ճշդել ընտրութիւնը :

Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

- Յօդ. 48. Սոյն կանոնագիրը վերաքննելի է երեք տարին անգամ մը :
- Յօդ. 49. Սոյն կանոնագիրը ու կրթական ծրագիրը ինչպէս նաև ամէն փոփոխութիւն, կը ներկայացուի Ազգ. վարչութեան առ ի վաւերացումն :

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ

- Յօդ. 50. Եթէ երէք Ընկերութիւնը լուծուի, Ազգ. կեդր. վարչութիւնը տէր կ'ըլլայ, յանուն Ազգին, Ընկերութեան բոլոր ընչից և ստացուածոց, և կը յատկացնէ զայնս Հայաստանի Գաւառաց կրթութեան գործին :

Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

- Յօդ. 50. Այս կանոնագիրը վերաննելի է երեք տարին անգամ մը :
- Յօդ. 51. Սոյն կանոնագիրը, ինչպէս նաև ամէն փոփոխութիւն Ազգ. վարչութեան կը ներկայացուի վաւերացման համար :

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ

- Յօդ. 52. Եթէ Ընկերութիւնը լուծուի, Ազգ. վարչութիւնը յանուն ազգին տէր կ'ըլլայ Ընկերութեան բոլոր ինչներուն ու ստացուածքներուն, եւ զանոնք կը յատկացնէ հայարմակ գաւառաց կրթական գործին :

<< Ազգային գրադարան  
39621  
NL0050762

